


4043

Timurcuk (Dolgu)

1734



U. 1893

105

891.71-~~125~~
7-25

ՊԱՌԱՀ ՏՕՆԿԱ

Թարգմանութենից

Ն. ԲԱԲԱԳԵԼՎԵԱՆ.

ՄՈՍԿՈՒ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԻ ՈՒ ԴԱՐԵԱՆ Ի.

1893

(56)

ՀԱՅ

2011

891.74

7-25

ԱՐ

ՊԱՌԱՀ ՏՕՆԿԱ

Թարգմանութեանից

Ն. ԲՈԲԱՔԵԽՎԵԱՆ.

1007
34163 9.

ՄՈՍԿՈՒ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՈՑԻՉ ԲԱՐԻՈՒԻԴԱՐԵԱՆԻ. [ԲԱՐԱ]

1893 [ՑԱՐ]

(56)

Дозволено цензурою. С.-Петербургъ, 21 Октября 1892 года.

Типографія М. Бархударова, Москва, Масницкая, д. нас. Ананова.

Այս աշուպից զա մշկովան պատ ու տօնութե. ծնո
հիմ լրագրու և անդ բայց այս քանութեան պատ ու շ
ու պարթօն ուժուն չը մտաղախնից ու զ զ առ և
առ նորութ նաև արդարակ պատ և անդ և անդ
ու պարթօն շնուր այս անդ անդ պատ քանութ զ զ
առ անդ պատ անդ անդ պատ զ զ անդ պատ զ զ
անդ պատ զ զ անդ պատ զ զ անդ պատ զ զ

ՊԱՌԱԻ ՏՕՆԿԱ.

(Թարգ. ռուսերէնից*).

I.

Պառաւ Տօնկա Օբրետենօվան ծնուել է 1812 թւ-
յն, Բուշուկի շրջակայ գիւղերից մէկում, հասարակ շի-
նական-խաշնարածների մի բաւականին հարուստ ընտա-
նիքում: Գիւղեց նրա ծնողները բնակուելու համար տե-
ղափոխուեցին Բուշուկ, ուր և Տօնկան տասնինը տարե-
կան հասակում պահուեց քաղաքի առաջին վաճառա-
կաններից մէկի՝ Տիմո Օբրետենօվի հետ, որի հետ ապրեց
քառասուն տարուց աւելի: Նա ունեցաւ եօթ երեխայ՝ 5
տղայ և 2 աղջեկ: Խսալէս իսկցյն կրտեսնենք, նրանք՝
համարես ամենքն էլ՝ բուլղարական ազգի աղատութեան
քաւութեան զոհ դարձան:

Տօնկան արդէն 50-ամեայ պառաւ էր, երբ 1862
թուից սկսեց ազատութեան շարժմանը մեծ եռանգով
մասնակցել: Այն ժամանակ Ոռոմինիայում կրակու ճա-
ռեր էր արտասանում բուլղար քաղաքական-փախստա-

*) «Съверный Вѣстникъ», 1887 г. №№ 1, 2 и 4. «Бор-
цы и мученики за свободу Болгаріи».

И. Иванович.

կան (Էմիգրանտ) ու զրող Ռակօվսկին, որ յորդորում էր իւր ազգը ապստամբել թխւրքաց դէմ և ապստամբների մի խումբ էր կազմակերպում: Այդ ձառերը Տօնկայի ականջին էլ հասան և այդ արտակարգ կնոջ մնացած ամբողջ կեանքը որոշեցին: Նրա տունը Ռուշուկում, հէնց Դանուբի ափին, ժողովատեղի գարձաւ տեղական բոլոր երիտասարդ հայրենասէրների համար, որոնք Տօնկայի մեծ որդիների՝ Սնգելի և Պետրոսի հետ միասին այնտեղ վարժուում էին զէնք գործ ածելում, որովհետեւ մտադիր էին մտնել խմբերը, որոնց կազմելու մասին այն ժամանակ խօսք կար էմիգրանտների մէջ: Մակայն այդ խմբերը չէին երեւում Բուլղարիայում, մինչդեռ Բէլղրազում, Սերբիական տէրութեան թոյլտութեամբ, էմիգրանտներից կազմել էին մի բուլղարական լեզեն, որտեղ երիտասարդները, ապագայ ապստամբութեան նպատակով, սովորում էին զինուորական արհեստը: Այդ լեզենը կազմուելուն պէս, այնտեղ ուղարկեցին Տօնկայի ցանկութեամբ նրա որդիներից մէկին՝ Պետրոսին... Խսկ նրա մեծ որդին Սնգելը, մի քանի ընկերներով միասին, մօր օրհնութեամբ՝ թափառում էր Բուլղարիայում և Թրակիայում (Խումելիայում) ժողովրդի տրամադրութեան հետ ծանօթանալու և յարմար գէպքում պրօպագանդա անելու նպատակով:

Յետոյ եկաւ՝ Բուլղարների համար ընդհանրապէս և Տօնկայի համար մասնաւորապէս անմօռանալի 1868 թիւը, որը յայտնի է Հաջի Դմիտրի և Ստեփան Ղարաջի ապստամբական փորձերով: Հէնց որ Օբրեսենօվների ընտանիքին հասաւ այն գաղտնի լուրը, թէ Խումինիական ափում՝ Ժուրդեցի մօտ՝ խումբ է հաւաքուել և պատրաստ է յառաջ խաղալ, խսկոյն Սնգելը և Պետրոսը Դանուբի անցան և միացան ապստամբական գնդի հետ... Տօնկան ինքը գնաց տեսնելու արշաւանք սկսելու պատրաստուղ խումբը, տանելով հետը ծաղիկներ ու օղի:

որ իւր ձեռքով բաժանեց բոլոր երիտասարդներին, օրհնեց նրանց, յաջողութիւն բարեմաղթեց նրանց հայրենասիրական դժուար, վատանգաւոր գործին և յետոյ տուն վերադառնաւ: Տօնկայի ապստամբների բանակն այցելելը այս վերջիններիս վրայ վերին աստիճանի զօրեղը ոգեսորիչ արպաւորութիւն գործեց, բորբոքեց նրանց հայրենասիրական յշյաերը... Եթէ արդէն պառաւած մի կին այն աստիճան համակրում է նրանց գործին և հաւասում է նրա յաջողուելուն, որ տալիս է խմբին իւր սեփական որդիներին և խումբը օրհնութիւններով է ծանապարհ գնում,—մըտածում էին նրանք, —ուրեմն ինչպիսի համակրական ընդունելութիւն, ինչպիսի ոգեսորութիւն է սպասում նրանց հայրենիքում ընդհանրապէս ժողովրդի և մասնաւորապէս երիտասարդութեան կողմից*)...

Նրանք, ինչպիս երեւում է, չէին խմանում, որ Տօնկայի նման մարդիկ միլիոնների մէջ մի հատիկ են լինում... .

Դառնալով Ռուշուկ, պառաւ Տօնկան սկսեց անհանդիստ սրտով սպասելը թէ երբ պիտի երեայ Թիւրքիայի սահմաններում խումբը, որի մէջ էին և նրա սարսափելի վատանգի ենթարկուած որդիները և որը, ինչպէս նա լսել էր ապստամբների բանակում, պատերազմական գործողութիւնները պէտք է սկսէր հէնց Ռուշուկից: Մի քանի օր նա զուր սպասեց, —երիտասարդների մասին ձայն չկար: Բայց ահա կայծակի արագութեամբ հասաւ Ռուշուկ, ամենքին սաստիկ յուզմունքի մէջ քցելով, այն լուրը, թէ ապստամբները ափ են դուրս եկել Վարդինեան Ճահիճների մօտ, ջարդել են եղերը պահնակ խումբը,

*) Ընթերցողներին երեկի յալտնի է, թէ որքան դառն կերպով խարուցին այդ ազնիւ, յափշտակուած երիտասարդները ալդպէս յոյսեր տածելով իրանց ժողովրդի վերաբերմամբ...

թէ յետոյ նրանք հարկադրուած են եղել մի քանի անգամ կռուել թիւբքաց զօրքերի հետ, թէ համարեա բալոր երիտասարդներին կամ կռորել են կամ բռնոտել թէ, մի խօսքով, խումբը ջնջուած է և թէ սպանուած են նշնպէս խմբապետները... թէ ինչ ձնշող տպաւորութիւն պէտք է գործէին այդ սարսափելի լուրերը թուշչուկի բուղարների վրայ, որոնց միջից առաջ էմիգրանտ էին դարձել և յետոյ մտել էին խմբի մէջ բազմաթիւ երիտասարդներ, այդ թողնում ենք, որ ինքը ընթերցողը դատի... Մի քիչ ժամանակ էլ անցաւ և ամբողջ թուշչուկը աչքով տեսնելով կարող էր համոզուել, որ երիտասարդական խմբի թշուառ վիճակի մասին պտտող չարագուշակ լուրերը իրաւացի էին. մէկ-մէկի յետեից շղթայսկապ քաղաք էին բերում գերի ընկած վիրաւոր խմբակիցներին, նրանց թուում և Ստեփան Ղարաջին, մեծ հանդիսով բերում էին նշնպէս և թիւբքաց արիւնաշաղախ յաղթանակները—դանաշեների վրայ ցցոտած՝ ապրատամբների վլուխները... Մի քանի ծնողներ յուսահատութեամբ և սարսափով ճանաչեցին այդ յաղթանակների մէջ իրանց մի քիչ առաջ անյայտացած որպիների վրլուխները... Լաց ու կոծը արիւց քաղաքի փողոյներում... Պառաւ Տօնկան այդ ժամանակ շատ անտանելի ծանր բոպէներ քաշեց. մի կողմից նրան տանջում էր այն, որ նա ոչինչ չգիտէր կռորուած խմբին պատկանող իւր որդիների մասին, իսկ միւս կողմից՝ այն սարսափելի անէծքները, որ թափուում էին նրա վլսին այդ զժբազզութիւնից վշտացած շատ ծնողների կողմից... Մի քանի մայրեր, իրանց աչքով տեսնելով ու համոզուելով, որ իրանց որդիքը մեռած են, և իմանալով, որ նրանք, մինչեւ այդ թշուառութեան պատահելը, համարեա բոլոր ժամանակը անց էին կայնում պառաւ Տօնկայի տանը,— լալով, ողբալով և աղեկտուր վայնասունով խումբ-խումբ,

ուրիշ կանայք էլ յետեներիցը քյած, մօտենում էին նրա տան պատուհաններին և վշտահար սրտով ինչ ասէք ասում էին արտայայտելու համար իրանց անէծքը, կատաղութիւնը և տաելութիւնը դէպի այդ թշուառ կինը, որը, նրանց ասկով, կախարդութեամբ գրաւում և «զիխահան» էր անում նրանց որդիներին... ի՞նչ պիտի զգար Տօնկան լսելով այս բոլորը, զժուար է նկարա զրել...

Սակայն Անգել և Պիտրոս որդիների վիճակը նրա համար դեռ ևս մնում էր անյայտութեան խաւարով պատած: Գերուածների մէջ նրանք չ'կային. չէին բերուած թուշչուկ նշնպէս և նրանց վլուխները... Խեղճ մայրը հազար ու մի ենթազրութիւններ էր անում և անսակելի կերպով տանջուում էր... Վերջապէս մէկ երկու օրից յետոյ նրա կրտսեր աղջեկ Անսատասիան, որ բոլոր այդ ժամանակը հսկում էր դէպի Տըրնօվո տանող Ճանապարհի վրայ, վաղէվաղ եկաւ և յայտնեց, որ Տըրնօվոյից բերցին գերիների մի նոր խումբ և որ նրանց թուումն է և Անգելը: Այդ լուրը շուտով հաստատեցին և Տօնկայի վրայ զայրացած քաղաքային «կէկէլները», որոնք խրմբերով հաւաքուած նրա լուսամուտների տակ զիտմամբ բարձրաձայն բլըրում էին, թէ իբր վճռուած է արդէն՝ պառաւ մօրն էլ որդիների հետ կախ տալ...

Չնայելով որ շատ զօրեղ հոգու տէր էր Տօնկան, բայց էլք բոլոր այդ սարսափելի լուրերը և զրցյները, հարեւանների չարախնդացութիւնը և նրանց անէծքները, այն հոգեկան տանջունները, որ զգում էր սիրելի որդիներին սպառնող օրհասի մասին մտածելիս—ձնշեցին, խորտակեցին այդ հայրենասէր-նահատակ կնոջ բարոյական ուժերը: Նրան առ ժամանակ տիրեց փոքրոգի երկիւղ, նա վախենում էր դէմ առ գէմ զուրս գալ վանդի առաջ, համոզուել, որ իւր որդիներին այլ ևս փրկութիւն չ'կայ,

նրանց մասին տեղեկութիւններ հաւաքել ճակատ առ Ճակատ ելնել իւր վրայ զայրացած բնակիչների դէմ,—ուստի նա փակուեց իւր տանը, վախենալով դուրս գալ Ռուշուկի փողոցները, ուր հէնց այդ ժամանակ կանգնեցրել էին չարագուշակ կախաղանները և սկսել էին կախել: Վշտից համարեա խելագարուած այդ անբաղդ պառաւը դէս-դէն էր ընկնում փակուած սենեակում ամբողջ երկու-երեք օր, որոնց ընթացքում նոր բերած տպատամբներին չարչարում էին խիստ հարց ու փորձով, բայց վերջապէս չ'կարողացաւ զիմանալ հոգեկան սարսափելի տանջանքին, դուրս ելաւ տանից և վաղեց դէպի բանար. որ, ինչ էլ լինի, տեսնի սիրելի որդիններին. — նա դեռ ևս չէր իմանում, որ երկրորդ որդին՝ Պետրոսը սպանուած է Բաղկանում և որ բանտում նստած է միայն մեծ՝ Անգելը... Սակայն մանել բանտը շատ դժուար էր: Բանտի մեծերը, վերին աստիճանի ղարմացած պառաւի յամառութեան և յանդգնութեան վրայ, — հանաք բան է ինչ... խռովարարներին այցելել, — կոպտութեամբ խոկեցին նրան: Բայց պառաւ Տօնկան այն տեսակ մարդկանցից չէր, որոնք հեշտութեամբ հրաժարուում են իրանց դիտաւորութիւններից: Նա մի քանի անգամ էլ եկաւ բանտը, խընդրելով, որ իրան թոյլ տան ներս մտնել, բայց նրան շարունակ խռուում էին անզթաքար, իսկ վերջին անգամ նա մինչև իսկ ծեծ կերաւ զափթիայից: Մանօթ լինելով թիւրք աստիճանաւորների բարքերի հետ, նա սկսեց ընծաներ բաժանել բանտի բոլոր ծառայողներին, սկսած բանտի կառավարչից մինչև վերջին զափթիան: Այդ միջոցը վերջ ի վերջոյ կատարեալ յաջողութեամբ պսակուեց, — Տօնկային ներս թողեցին բանտարկեալների մօտ:

Նրա առաջին տևակցութիւնը որդիների և ուրիշ բանտարկեալների հետ՝ մեծ տարակուսանքի մէջ քցեց թիւրք աստիճանաւորներին, որոնք ներկայ էին այդ տե-

տակցութեանը: Նրանք սպասում էին լաց ու կոծ, արտասուք, սուգ ու շիւան տեսնել, — բայց ի՞նչ... Տօնկան բանալու լուրջ ու հանգիստ, խիստ հայեացքով և չարժակառով շրթունքների վրայ: Թէ ինչքան դժուար էր նրա համար իրան այդպէս ցցց տալը, այդ հասկանալ չէին կարող թիւրքերը և հասկանալու ցանկութիւն էլ չ'ունէին:

— Ողջոյն ձեզ բուլղարական ամբողջ թագաւորութիւնից, — ծաղրելով ասաց նա թիւրքերէն, դառնալով դէպի կալանաւորները: — Ենորհ արեք պառաւիս, ասացէք խնդրեմ, ձեզնից ո՞րը պիտի դառնայ բուլղարների թագաւորը, ո՞րը վալի-փաշայ և այն, Երբ պիտի խոկեք բոլոր թիւրքերին... Յետոյ զառնալով որդուն, նրա զլիին վերդովուած և զայրագին նախատինք թափեց: Տարբանձ էր ինչ է նա, երբ չար մարդիկ նրան այդ հորսարքեր ճանապարհին էին գնում... Խըմու պառաւ մօրից խորհուրդ չ'հարցրեց... նա նրան կ'ասէր, որ ինքն Աստուած օրհնել է թիւրքաց տէրութիւնը և որ բուլղարները զատապարտուած են յաւիտեանս-յաւիտենից «ռայա» մնալ...

Այս կատակերգութեան (որ ի հարկէ իսկոյն հասկացան խռովարարները) յաջողութիւնը գերազանցեց այդ խելօք կնոջ ամենայանդուգն յոյսերը: Պառաւ Տօնկային թիւրքերը գովեցին նրա առողջ դատողութեան համար, անուանեցին «Կտրիճ պառաւ», քաջալերիչ կերպով ձեռքով խփեցին նրա ուսին և թոյլ տուին՝ յանկացած ժամանակը այցելել բանտը: Նրան էլ հէնց այդ էր հարկաւոր: Նա գալիս էր ամեն օր, բերում էր կերակուր, սպիտակեղին և հագուստ թէ իւր որդու և թէ նրա բոլոր ընկերների համար... Նա այցելում էր կալանաւորներին և հոգում էր նրանց պէտքերը մի ամբողջ ամիս, որի անցնելուց յետոյ դատարանը թեթեացրեց մի քանի ապրատամբների պատիմը, որոնց թուում և Տօնկայի որդի Ան-

գելինը, վճռելով՝ կախաղան հանելու փոխարէն մշանջենաւ որապէս աքսորել նրանց Ա.-Ժան-դ'Արկի ամրոցը, ուր և շուտով ուղարկեցին բոլոր դատապարտեալներին: Պառաւ Տօնկան նրանց համար փող հաւաքեց, տուեց նըրանց՝ ձանապարհի համար ամենահարկաւոր բաները և ընդհանրապէս արեց ամեն բան, ինչ որ հարկաւոր էր թեթևացնելու համար իւր սրտի համար թանկ երիտասարդնահատակների ծանր վիճակը:

II.

Վատ ժամանակներ հասան պառաւ Տօնկայի համար: Երկու մեծ որդիներին կորցնելուց յետոյ շատ չ'անցած՝ նա զրկուեց և ամուսնուց, որին թունաւորեց իւր ընկեր վաճառականը, ցանկանալով նրա հարստութեանը տիրանալ: Այրին մնաց առանց տարրուստի որ և է միջոցի, ունենալով զղին երեք կրտսեր տղաներին ու երկու աղջիկ: բայց չ'յուսահատուեց, այլ եռանգով գործի կպաւ... իւր անձնական դործերի և հոգերի մէջ նա չէր մոռանում իւր հայրենասիրական պարտաւորութիւնները: Այդ խուլ ժամանակները (1868—1871 թ.), երբ հայրենասիրական շարժումը բուլղարական երիտասարդութեան մէջ ժամանակաւորապէս դադարեց, պառաւ Տօնկային տանջում էր այն միաքը, որ Ռուշուրկի կախաղանների վրայ նահատակուած գործիչների յիշատակը քիչ-քիչ մոռացուում է, որ ամեն մի հայրենասէրի համար սուրբ գերեզմանները անհետանում են խոտերի մէջ, հաւասարուում են հողի հետ... Եւ աշա նա սկսում է ծածուկ, — բայցարձակ չէր կարելի, — յաճախել կախաղան հանուածների թաղած տեղը, մաքրում է նրանց գերեզմանները վայրի խոտերից, զարգարում է նրանց ծաղիկներով, մոմեր է վառում նրանց վրայ, մի քաշանայի համոզում է

վիշերները ծածուկ հոգեհանգիստ կատարել, զոհելով իւր աշխատած գերջին կոպէկները՝ առնում է հասարակ գերեզմանափարեր ու վրաները նշանակել է տալիս նահատակների անունները, մահուան ժամանակն ու հանգամանքները — և զնում է թանկազին գերեզմանների վրայ: Նցն ժամանակում նրան յաջորդուեց՝ մեծ աշխատանքից յետոյ՝ հողից հանել հոչակաւոր խմբապետ Ստեփան Ղարաջի գանգը, որը մինչև այսօր էլ խորին յարգանքով իւր մօտ պահում է արկղում...

Սիրելի հանգուցեալների վերաբերմամբ իւր գործունէութեան և հոգսերի ժամանակ նա չէր կարող՝ ի հարկէ իւր վրայ չ'զարձնել գերեզմանատան պահապանների ուշադրութիւնը, որոնք սկզբում խռկում էին նրան, բայց նա՝ հիւրասիրելով նրանց և ընծաներ բաժանելով՝ կարողացաւ ամօքել նրանց սրտերը: Պահապանները քիչ-քիչ սովորեցին նրան և մինչև անգամ գերեզմանները պահպանելու և մեծարելու գործում նրա օգնականները դարձան... .

Ինչպէս վերեն ասացինք, խուլ ժամանակ էր. ոչ մի տեղ ամենասփոքրիկ շարժում անգամ չէր նկատուում, ոչ մի կենդանի խօսք չէր հնչում, չէին լսուում ազատութեան հրաւերներ — և մեր հերոսուհուն ոչինչ չէր մնում անել եթէ ոչ՝ արտմութեամբ յիշել մեռած որդիներին և ծառայել սպանուած ախոյեանների ու նահատակների յիշատակին... Բայց ահա հասաւ 1871 թիւր, սկսուեց հայրենասիրական գործունէութեան վերածնութիւնը, որին հոգով ու սրով անձնատուր եղաւ պառաւ Տօնկան: Նա ինքը գեռ ունէր անխռտակելի եռանդի և բարոյական մեծ ուժերի հարուստ պաշար, բայց դրանից գեահինդ զաւակ էլ ունէր: Ուրեմն նա դեռ շատ բան կարող էր տալ իւր ճնշուած հայրենիքի աղատութեան կոուին, շատ բան կարող էր զոհել աղատութեան սուրբ գործի

համար... եւ նա ամեն բան տուեց, ամեն բան
զոհեց...

Այդ ժամանակ ասպարեզ են գալիս աղատութեան
այնպիսի «առաքեալներ», ինչպէս Անդել կընչըր, Սար-
կաւագ Լևսկին և ուրիշները: Այդ մարդկանց նախաձեռ-
նութեամբ՝ Ռուշուկում հիմուում է «Բուլղարական
գաղտնի մասնաժողով», որի առաջին նիստը կայանում է
պառաւ Տօնկայի տանը: Այդ զիշերային նիստին ներկայ
եղած ականատեսների պատմելով՝ Տօնկան իւր չափազանց
աշխուժութեամբ, վաս զգացմունքներով և եռանգով
զարմացնում էր ամենքին: Ամբողջ զիշերը նա չ'պառկեց
քնելու, անդադար դուրս էր գալիս, լաւ զննում էր բո-
լոր անկիւնները, տեսնելու համար՝ հօլոող չկայ դաւա-
գիրներին, յետոյ զնում էր խորհրդի սենեակը, յափրշ-
տակութեամբ լսում էր անվեհեր ճառերը և առաջարկու-
թիւնները, զրգուում էր ապստամբների եռանդը, բարյա-
կան պարագ էր զնում նրանց վրայ՝ այդ սրբազն կոի-
ւը շարունակել մինչև վերջին շունչը, մինչև արեան վեր-
ջին կաթիւը, և չափազանց ուրախութիւն էր զգում, որ
գործը նորից սկսուում է, որ առաջին զոհերը, որոնց մէջ
նա էլ մասն ունէր, 'ի զուր չ'անցան, որ ցանած սերմը
չ'խեղգուեց արմատում... Երբ մարդ մտածում է, որ այս
ամենը կատարուում էր թիւրքերի տիրապետութեան, սար-
սափելի հալածանքների և կախաղսնների ժամանակ, ա-
կամայ լցուում է մի տեսակ երկիւղածութեամբ դէպի
այդ սուրբ պառաւը ու բացականչում է՝ «Փառք և պա-
տիւ քեզ, ով մեծ հայրենասէր կին»...

Որովհետեւ Ռուշուկի «գաղտնի մասնաժողովը», Լև-
սկու ծրագրով, պիտի ծառայէր Ռումինիայի հետ յարա-
բերութիւնը հեշտացնելու նպատակին, պիտի արտասահ-
մանից աեղափոխէր Բուլղարիա զէնքեր, զանազան հրա-
տարակութիւններ և այլն, ուստի անհրաժեշտ էր ամե-

նից առաջ, գանել քաղաքում մի յուսալի տեղ, որտեղ
կարելի լիներ շինել պահեստ և որտեղ պատսպարան
գտնէին Ռուշուկում, որպէս կենտրոնատեղում, եղած ժա-
մանակը բոլոր այն «առաքեալները», էմիսարները և գոր-
ծակալները, որոնք գալիս էին այդտեղ գործով: Պառաւ
Տօնկայից աւելի հաւատարիմ և յուսալի մարդ գտնելը
զժուար էր—և ահա նրա տունը դառնում է պիխաւոր
բնակարան և պահեստ: Այդ նպատակով Տօնկայի տնե-
ցիք մեծ զգուշութեամբ սենեակներից մէկի տակ փորեցին
բաւականին ընդարձակ ստորերկրեայ մի ծածկարան, որը
ծառայում էր իբրև մթերանոց և որտեղ հարկաւոր ե-
ղած ժամանակը, կարող էին թագնուել մի քանի հոգի...
Աւելի ապահով լինելու համար, եթէ ոստիկանութիւնը
յանկարծակի խուզարկութեան գալ կամ յարձակում անէր
այդ ապաստանարանի վրայ, տունը շրջապատող բակում
զանազան կողմերից շինել էին մի քանի գոնակներ, որ-
տեղով աննկատելի կերպով կարող էին փախչել այդ
վայրկեանում տանը գտնուող դաւադիրները... Բայց զը-
րանից՝ պառաւ Տօնկան, որ գործում էր մասնաժողովի
հրահանգների համեմատ, կարողայաւ իւր կողմը զրա-
ւել մի քանի ոռոմինացի մանկավարժ, որոնց օգնու-
թեամբ սկսեցին Ռումինիայից տեղափոխել պատրաստուող
ապստամբութեան համար անհրաժեշտ բոլոր բաները: Մա-
կոյիներով տեղափոխած բաները Տօնկան ու նրա տնեցիք
զիշերները կրում էին առն ու թագնում այնտեղ ստոր-
երկրեայ մթերանոցում: Եատ անգամ ինքը Տօնկան իւր
աղջիների ու մի քանի ուրիշ կանանց հետ, —որոնցից կը
յիշենք Լիւրէն Կարաւելովի կնոջը՝ Նատալիային, —կեանք-
ները վտանգի ենթարկելով, տեղափոխում էին Ռումինիա-
յից Ռուշուկ իրանց զգեստների տակ պահած՝ սրեր,
ասորձանակներ, գրքեր, լրագիրներ և այլն... Նրա մեծ աղ-
ջիք՝ Պետրանան, հարկաւոր եղած ժամանակը նամակ-

ներ էր տանում-բերում Ռումինիայի, Ռուշուկի ու Տըս-
նօվոյի մջ, կատարում էր մասնաժողովի զանազան պա-
տուերները և դրօշակներ էր կարում կազմուող ապստամ-
բական խմբերի համար... Միենցն ժամանակ Տօնկան իւր
կրոսեր որդուն՝ Գէորգին ուղարկեց Օգէսայի զինուորա-
կան ուսումնարանը, որպէս զի նա զինուորական արհես-
տին վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքէր, որոնք կա-
րող էին շատ ու շատ պէտք դու ապագայ ապստամբ-
ներին...

Առհասարակ պառաւ Տօնկայի գործունեութեան
ասպարէզը այդ ժամանակ շատ ընդարձակ էր... Նրա մօտ
գնում-գալիս էին շատ մարդիկ, նրա տունը միշտ լիքն
էր լինում բազմութեամբ—և այդ հանդամանքը հետա-
քրքիր հարեւանների ուշադրութիւնը չ'զրաւել իհարկէ
չէր կարող: Տօնկայի բաղդից՝ հարեւանները, չ'իմանալով
թէ ինչ մարդիկ են Օրբեանօմների տունը յանախում և
ինչ նպատակով վճռեցին, որ պառաւը պարապում է
կախարդութեամբ և որ նրա բազմութիւ այցելուները—
բոլոր նրա մօտ գալիս են նրա կախարդութիւնների հա-
մար:

Մինչ այս, մինչ այն, հասաւ 1875 թուի աշունը,
երբ պիտի բոնկեր ընդհանուր ապստամբութիւնը: Այդ
ապստամբութիւնը, զանազան պատճառներով, չ'յաջու-
եց, սահմանափակուելով միայն թեթև անկարգու-
թիւններով մի քանի կէտերում, ինչպէս օրինակ՝ չին-
Զագօրայում, Շումիայում, Զերվենովոգում (Ռուշուկի
մօտ) ևայն: ՚ի հարկէ նորից սկսուեցին դաժան Ճնշում-
ներ... Թիւրքաց կառափարութիւնը Ռուշուկում ամե-
նից առաջ ուշադրութիւն գարձեց պառաւ Տօնկայի վը-
րայ, որին շատ վատ կողմից ցոյց տուին բոլոր նախըն-
թաց հանդամանքները և որի տանը թագնուած էին այդ
ժամանակ նրա որդիքը՝ նիկոլայը և Գէորգը (որոնց մի

քիչ առաջ նա կանչել էր Օգէսայից) իրանց մի քանի
զինակիցների հետ միասին, որոնք նոյնպէս մասնակցել
էին այդ վերոյիշեալ խլրտումներին: Մի դիշեր նրա մօտ
եկաւ ոստիկանութիւնը, որ վնասում էր փախած խոռ-
վարարներին, բայց ոչոքի և ոչինչ չ'գտաւ ու չ'բռնեց:
Բակի կողմնակի զոների շնորհիւ բոլոր հալածուողները
կարողացան ժամանակին փախչել—փախաւ և Պետրանան,
որը նոյնպէս չէր կարող գթութիւն յուսալ ոստիկանու-
թեան կողմից... Ստորեկերեայ «զինարանը», որ լեզն էր
զնոքերով ու հրատարակութիւններով, պառաւ Տօնկայի
հնարագիտութեան, ստոնասրտութեան ու ճարտարու-
թեան շնորհիւ, նոյնպէս ծածուկ մնաց: Բայց չ'նայած
խոռվարիկութեան այդ կատարեալ անյաջողութեանը, կա-
ռավարութիւնը այնու ամենայնիւ մեզագրում էր «մաս-
նակցութեան» մէջ պառաւին, որ աշկարայ կերպով ար-
ել էր համարեալ բոլոր իւր որդիներին խոռվարաների
խումբը, —և սպառնում էր նրան կախել: Պառաւ Տօնկան
վրան կատարեալ անմեղութեան դիմակ առաւ.—Ճիծա-
զում էր, բանը կատակի էր քցում:

Սպասեցէք, շուտով երկրորդ անդամ մարդու կը
դնամ,—ամենալուրջ գէմքով հաւատացնում էր նա, ՚ի
միջի այլոց, թիւրքաց ահարկու աստիճանաւորներին, երբ
նրանք էլի յիշեցնում էին նրան՝ նրա չորս ապստամբ
որդիների մասին: Ուղիղն ասած՝ այդ որդիքս շատ էլ
յաջող գուրս չ'եկան: Իսկ հիմա ես կ'աշխատեմ՝ այլ ես
աշխարհ չ'բերել առլիթանի «դիւշմաններ» (թշնամիներ):

Թիւրքերը ակամայ ծիծազում էին, լսելով այդ 63-
ամեայ պառաւի կամ, ինչպէս իրանք էին կոչում, այդ
«զօջա կօմիտի» (պառաւ ապստամբի) կատակները, և առ-
ժամանակ ապատ էին թագնում նրան: Իսկ ազատութիւ-
նը շատ կարևոր էր Տօնկայի համար, որովհետեւ այդ ժա-
մանակ նա այնքան գործ ու հազս ունէր, որ ապատ շունչ

քաշելու ժամանակ անգամ չունէր: Իուշչուկի բանտը, ինչպէս և ուրիշ շատ տեղերի բանտերը, լցուած էր բուլղարացի հայրենասէրներով, որոնց կասկածում էին յեղափոխութիւն սկսելու դիտաւորութեան և փորձեր անելու մէջ: Կասկածի ենթարկուած շատ անձինք, նրանց թւում և Տօնկայի երկու որդիքը՝ Նիկոլայը և Գէորգը, փախել էին Ռումինիա և մնում էին Ժուրժեւոյում՝ առանց ապրելու որ և է միջոցի: Ինչ որ էլ լինէր, հարկաւոր էր օգնել, քաջալերել թէ՛ բանտարկուածներին և թէ՛ փախըստականներին: Ահա օգնութեան այդ սուրբ գործին նուիրեց իւր բոլոր ուժերը մեր հայրենասէր—հերոսուհին:

Որովհետեւ ինքը սեփական ոչ մի միջոց չ'ունէր, նա ստիպուած էր թափառել խանութից-խանութ, անիցտուն և ժողովարարութիւն անել, նուիրատուութիւններ հաւաքել իւր բարի գործի համար:

Զարաբաստիկ 1868 թուից բաւական ժամանակ էր անցել. այդ ժամանակի ընթացքում բուլղարների տրամադրութիւնը արդէն նկատելի կերպով դէպի լաւն էր փոխուել. այլ ևս չէին հայհոյում պառաւ Տօնկային, չէին անուանարկում կամ անիծում, ինչպէս առաջ, այլ ուրախութեամբ տալիս էին՝ ով ինչ կարող էր: Իսկ նա, հաւաքած նուերները հետն առած, շտապում էր բանտը, ուր նա առաջուայ պէս ազատ մուտք ունէր, բանտից՝ Դանիուբով անցնում էր փախստականների մօտ, հազընում; կերակրում, խմեցնում էր նրանց, վերցնում—բերում էր նրանց սպիտակեղէնն ու զգեստները, տանը լուանում; կարում, կարկասում էր, ուղարկում էր էլի Ժուրժեւու—և այսպէս վագփզում էր դէս ու դէն, չարչարուում, աշխատում էր առաւոտից մինչև երեկոյ յօդուա իւր տարաբաղդ եղայրների: Շատ վատ կ'լինէր վերջիններիս զրութիւնը, եթէ Իուշչուկում չ'լինէր պառաւ Տօնկան, այդ եռանգոտ, սիրայորդոր, ազատութեան գործին և

այդ գործի համար մարտնչողներին անձնուեր արիասիբու կինը . . .

1876 թուին Տօնկան մի նոր սարսափելի հարուած կրեց: Ռումինիա փախած նրա որդիքը ծածուկ վերապարձան հայրենիք և, ստանձնելով «առաքեալների» փտանդաւոր դիրք, սկսեցին եռանդով քարոզել ու պատրաստել ընդհանուր ապստամբութիւն: Ապստամբութիւնը իրաք բռնկեց, և ահա Տօնկան զրկուում է իւր այդ երկու որդիներիցն էլ,—Գէորգը սպանուեց թիւրքերի հետ ունեցած մի ընդհարման ժամանակ, իսկ Նիկոլային ողջ-ողջ բռնեցին և շղթայակապ ուրիշ շատ երիտասարդների հետ բերեցին Իուշչուկ, իսկ այնտեղց մշտնջենաւոր աքսոր ուղարկեցին Ս.-Ֆան-դ'Արկի ամրոցը, ուր արդէն եօմը տարի տանջուում էր նրա մեծ եղայրը՝ Անդելը. . .

Վերին աստիճանի հանդիսաւոր և սրտառուչ կերպով ճանապարհ դրեց աքսոր գնացողներին. . . Թիւրքերին այդ ժամանակ սկսեցին աիրել մի տեսակ շփոթութիւն ու երկիւղ ապագայի վերաբերմամբ: Եւ իրաւ, չ'այս արիւնահեղ Ճնշումներին, ապստամբութիւնները յաջորդում էին մէկ-մէկի, ամեն անգամ աւելի և աւելի ահեղ կերպարանք ստանալով: Գործերը, քանի զնում, աւելի տագնապալից բնաւորութիւն էին ընդունում, և թիւրքերը պատճառ ունէին մտահոգութեան մէջ ընկնելու: Իսկ բուլղարները սրտապնդուել էին, սկսել էին զուխները մի քիչ աւելի բարձր բռնել: Հաջի Դմիտրի և Ստեփան Ղարաջի մարտակիցներին պատժելու և աքսորելու ժամանակ բուլղարները սարսափահար՝ մկան ծակերն էին մտնում և մտածել անգամ չէին համարձակուում՝ բացարձակապէս համակրութիւն յայտնել իրանց նահատակ եղայրներին. . .

Հիմա, 1876 թուին, աքսոր գնացողներին ճանապարհ էին գցում հարիւրաւոր բուլղարներ, տղամարդիկ ու կա-

նայք՝ ծաղիկներ բռնտծ ձեռքերին... Պառաւ Տօնկան,
պուխը հպարտութեամբ բարձր բռնտծ, գնում էր ամբո-
խի առաջեց, իւր որդու յետելից, բարձրաձայն ասում էր,
որ նա արդէն իւր չորս որդիներին տուել է ազատու-
թեան կոռուին, և միւնցին ժամանակ աւելացնում էր, որ
եթէ մի չորս որդի էլ ունենար, էլի չէր ափսոսալ, եթէ
տեսնէր, որ նրանք էլ զոհ են գնում ազատութեան սուրբ
պործին. . .

1878 թուին, Ս.-Մտեվանեան գաշնազրութիւնից
յետոյ, որբացած պառաւ Տօնկան մեծ բաղդ ունեցաւ
տեսնելու և բազմաչարչար ու ծերացած կրծքին սեղմելու
Փոքր-Ասիայի ամրոցից ազատուած իւր որդիներին: Առա-
ջնոր հայրենիք վերադարձաւ Նիկոլայը, որ ընդամենը
երկու տարի էր անյ կացրել բանտում: Իսկ Սնդելին ա-
ւելի ուշ արձակեցին: Նրան, ուրիշ եօթը ընկերների հետ
միասին, Թիւրքաց կառավարութիւնը երկար ժամանակ
չէր ուզում բանտից ազատել, պատճառ բերելով, թէ չա-
ջի Դմիտրի արշաւանքին մասնակցողները քաղաքական
յանցաւորներ չեն, այլ հասարակ աւազակներ:



ԳԻՒՆ Է Յ ԿՈՊ.

0005702

2013



